



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**  
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ**  
**ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

29 հունվարի 2016 թվական

ք.Երևան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ  
 մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
 Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
 Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ  
 Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
 Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

քննարկելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի բողոքի հիման վրա նոր հանգամանքով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 11-ի որոշման վերանայման վարույթ հարուցելու հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

2014 թվականի նոյեմբերի 14-ին ՀՀ ՖՆ իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչության հետաքննության բաժնի հետաքննիչ Ե.Հակոբյանը որոշում է կայացրել «Լեկմա Շուգ» ՍՊ ընկերության տնօրեն Ջուլետտա Եղիազարյանի նկատմամբ հանցադեպի բացակայության պատճառաբանությամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

ՀՀ գլխավոր դատախազ Գ.Կոստանյանը, ստուգելով վերոգրյալ որոշման օրինականությունը, 2015 թվականի մարտի 23-ին որոշում է կայացրել քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննիչ Ե.Հակոբյանի՝ 2014 թվականի նոյեմբերի 14-ի որոշումը վերացնելու և «Լեկմա Շուգ» ՍՊ ընկերության անվամբ մաքսանենգությամբ՝

մաքսային և այլ փաստաթղթերը խաբեությամբ օգտագործելու եղանակով, խոշոր չափերի ապրանքներ ՀՀ տեղափոխելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործ հարուցելու մասին:

2015 թվականի ապրիլի 13-ին դիմող Ջ.Եղիազարյանի ներկայացուցիչ Հ.Տեր-Վարդանյանը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ որոշումը վերացնելու և քրեական գործ հարուցելու մասին ՀՀ գլխավոր դատախազ Գ.Կոստանյանի 2015 թվականի մարտի 23-ի որոշումը:

Առաջին ատյանի դատարանը 2015 թվականի մայիսի 4-ի որոշմամբ դիմող Ջ.Եղիազարյանի ներկայացուցիչ Հ.Տեր-Վարդանյանի բողոքը բավարարել է՝ արձանագրելով, որ օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա լիազորել է ՀՀ գլխավոր դատախազին վեց ամսվա ընթացքում միայն մեկ անգամ վերացնել քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը, սակայն ոչ թե նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը, և պարտավորեցրել վարույթն իրականացնող մարմնին վերացնել քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ որոշումը վերացնելու և քրեական գործ հարուցելու մասին ՀՀ գլխավոր դատախազ Գ.Կոստանյանի 2015 թվականի մարտի 23-ի որոշմամբ թույլ տրված Ջ.Եղիազարյանի իրավունքների և ազատությունների խախտումը:

Դատախազ Կ.Խաչատրյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի հուլիսի 8-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2015 թվականի մայիսի 4-ի որոշումը:

Վերաքննիչ դատարանի վերոգրյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Է.Բաբայանը՝ խնդրելով վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 4-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 8-ի որոշումները:

Վճռաբեկ դատարանը 2015 թվականի սեպտեմբերի 11-ի որոշմամբ ներկայացված բողոքը վարույթ ընդունելը մերժել է:

ՀՀ սահմանադրական դատարանը (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան), 2015 թվականի նոյեմբերի 17-ի թիվ ՍԴՈ-1236 որոշման եզրափակիչ մասում հաստատելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը, բացահայտել է վկայակոչված նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ նշելով.

*«(...) [Ա]ռաջին՝ այն դեպքերում, երբ հսկող դատախազը վերացրել է քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը և քրեական դատավարության օրենսգրքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում տվել է կոնկրետ ցուցումներ կամ հանձնարարություններ, գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին նոր որոշում*

հնարավոր է կայացնել միայն իրավասու դատախազի կողմից տրված ցուցումների կամ հանձնարարությունների պարտադիր կատարման պարագայում,

**Երկրորդ`** մինչդատական վարույթում հետաքննության մարմնից, քննիչից պահանջված նյութերը, փաստաթղթերը, քրեական գործը հսկողության նպատակով դատախազին տրամադրելու վերաբերյալ վերջինիս պահանջի կատարումը պետք է իրականացվի անհապաղ,

**Երրորդ`** մինչդատական վարույթում դատախազական հսկողության շրջանակներում Սահմանադրությամբ և օրենքով ՀՀ գլխավոր դատախազին վերապահված լիազորությունների իրականացման արդյունքում ընդունված որոշումները պետք է դիտարկել որպես վերջնական և որևէ պայմանավորվածության մեջ չդնել հսկող դատախազի կողմից նման որոշում ընդունված կամ չընդունված լինելու հանգամանքի հետ»:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը, որպես նոր հանգամանք վկայակոչելով Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումը, կրկին վճռաբեկ բողոք է ներկայացրել` խնդրելով վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, վերանայել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին Վճռաբեկ դատարանի` 2015 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումը, բեկանել Առաջին ատյանի դատարանի` 2015 թվականի մայիսի 4-ի, այն անփոփոխ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի` 2015 թվականի հուլիսի 8-ի որոշումները և կայացնել նոր դատական ակտ:

Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանների դատական ակտերի հիմքում դրվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի այնպիսի մեկնաբանություն, որը հակասում է Սահմանադրական դատարանի կողմից թիվ ՍԴՈ-1236 որոշմամբ բացահայտված այդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն` «Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում`

(...) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը` գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ»:

Մեջբերված նորմի բովանդակությունից հետևում է, որ կոնկրետ գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշումը նոր հանգամանքի հետևանքով դատական ակտի վերանայման հիմք է, եթե Սահմանադրական դատարանը, որոշման եզրափակիչ մասում կիրառված նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելով, գտնում է, որ այդ դրույթն այլ մեկնաբանությամբ է կիրառվել:

Հիմք ընդունելով վերոնշյալը` Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թիվ ՍԴՈ-1236 որոշման եզրափակիչ մասում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակության շրջանակները բացահայտելիս Սահմանադրական դատարանը վիճարկվող նորմին չի տվել այնպիսի մեկնաբանում, որ ՀՀ

գլխավոր դատախազն իրավասու է յոթնօրյա ժամկետը լրանալուց հետո վեցամսյա ժամկետում, ի թիվս այդ նորմում հստակ նշված մյուս որոշումների, վերացնել նաև քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը, ինչպես նաև չի արձանագրել, որ քննարկվող նորմը կիրառվել է այլ մեկնաբանությամբ:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ չի պահպանվել քրեական գործի նյութերը հսկող դատախազին անհապաղ ուղարկելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշմամբ սահմանված պահանջը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ մասով նույնպես Սահմանադրական դատարանն իր որոշման եզրափակիչ մասում չի նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը կիրառվել է այլ մեկնաբանությամբ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Սահմանադրական դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 17-ի թիվ ՍԴՈ-1236 որոշումը չի կարող նոր հանգամանք հանդիսանալ Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումը վերանայելու և կայացված դատական ակտերը բեկանելու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.8-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ դատարանը վերանայման վարույթի հարուցումը մերժում է, եթե դատական ակտը վերանայելու համար հիմք դարձած նոր հանգամանքը հաստատող ապացույց չի ներկայացվել, և եթե դատարանին հայտնի չէ նման հանգամանքի առկայությունը:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով (2005 թվականի փոփոխություններով), ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.8-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի բողոքի հիման վրա նոր հանգամանքով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 11-ի որոշման վերանայման վարույթի հարուցումը մերժել:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

*Դատավորներ՝*

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ

